



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 11

Տ Ա Ր Գ Ի Ս Օ Ց

12 ՄԱՐՏ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Ցարեկան 50 Ղր.	Ցարեկան 54 Ղր.	Ցարեկան 12 Ցր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՑ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն րնել ՍԱՐԳԻՍՕՑ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին :

ՍԱՐԳԻՍՕՑ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գորհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆՆԱՆ

(صاريان) مطبعه مى — باب على جاده مى ٣٨

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Գասսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹՈՒՋ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատնաց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ ՄԱՍԻՆՎԱՅԹՈՒՋ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին)
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ)

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը)
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ)

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ)
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13)

ՍԱԻԻՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու բոլոր ֆաշիֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուլուի տունը:

ՖԷՆԻԿՍ ՕԹԲԻՇԻԷՆ


ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՍԺ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵՆՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Էրանֆ



ՀԲԴԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Էրանֆ

ՖԷՆԻԿՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՄԷՆԻԿՍ Հաւաքոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
ՖԷՆԻԿՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեանս ղրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի դաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւպօր Գերկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/հ 11

ՇԱԲԱԹ

12 Մարտ 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ Նուագահանդեսը . (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Հծծել (Բա-
նաստեղծութիւն) . — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ : Յաւակնոցներ . — ՄԻՔԱՅԷԼ : Փափաքներ .
— Գ. ԹԱԳԻՈՐԵԱՆ : Զեհիք ու Նախիր (Աղջիկներ) . — ՌՕՄԱՆ : Թե ինչո՞ւ . . .
(Փանքեղի) . — ՄԱՌԿՈՒԹ : Ընտրեալ ե . . . — ԼԻԼԱ : 10,000 Տարի Սառնակոյտի
մը մեջ . (Հանրագիտակի բերթօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՄԵԾ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Ամէն նիւթ իր ժամանակը ունի , ուստի Մեծ-Պահլի երկրորդ շաբաթին
կարժէ նկատի առնել Ս. Փրկչի Հիւանդանոցին ի նպաստ տրուելիք Նուագա-
հանդէսը , որուն կազմակերպութեանը ձեռնարկուած է արդէն :

Հիւանդանոցին տարեկան պիւտճէն հաւասարակշռող այս կարեւոր ու բա-
ցառիկ հասոյթի աղբիւրը , որ տեղի կունենայ կանոնաւորաբար ամէն տարի ,
գրաւականն է այն ինքնաբեր ու բարեացակամ զգացմանց , զորս կը տածէ մեր
համայնքը իր ծանր հանդէպ :

Մեր ժողովուրդը կը սիրէ հոգալ և նիւթապէս հասնիլ , նպաստել ամէն
անգամ՝ որ այդ չէնքին անունով դիմում կըլլայ իրեն , ու տարին հեղ մը սար-
քուած բացառիկ Նուագահանդէսին դրապէս չի մասնակցող՝ գրեթէ կարելի չէ
թուել :

Արդ , գիտնալով հանդերձ հաստատութեան ի նպաստ տարիներէ ի վեր
մտածուած և արդիւնաշատ այս ձեռնարկին առաւելութիւններն և օգտակարու-
թիւնը , թող ներուի մեզ օր առաջ յայտնել մեր դիտողութիւնները , դիտողու-

թիւններ՝ որոնք խմբագիրներէս աւելի ժողովուրդին բերնէն կը հասնին ու մենք թարգմանը կըլլանք հանրային կարծիքին :

Ատենօք , այս տարեկան բացառիկ նպատակը կը սարքուէր պարահանդէսի ձեւին տակ , բաղմածախս , տաղակալից . ապա նոյն ձեռնարկը թատերական ներկայացման փոխուեցաւ , ու այս վերջինն ալ իր կարգին մօնօթօն ու սովորական ըլլալը հաստատուելով , մասնախմբին ժրաջան ու բանիւրուն անդամները վերջին տարիներուն մէջ նուագահանդէսի գաղափարը յղացան , որուն առաւելութիւնը , պատշաճութիւնը և ծախուց խնայողութեան էականն ու կըրկնակ տեսակէտները նկատի առնուելով , հաստատուեցաւ թէ՛ այս վերջին գրութիւնը լաւագոյնն է , արդիւնաշատը և յարմարը , ու ալ անկէ ի վեր Հիւանդանոցի տարեկան նպատակը նուագահանդէսի ձեւին տակ կը սարքուի և ամենայն իրաւամբ :

Ամէն անգամ որ նոյն այդ բարենպատակ concertին գտնուելու առիթն ու պատիւը կուենանամ , դիտած եմ որ , — ինչպէս շատեր ինձ գողտփարակից , — միշտ օտար դէմքեր և առօրինակներ են , որոնք կուզան իրենց այլազան երաժշտական գործիքներով հեշտօրէն անցընել համբուած ժամերն ու վայրկեանները : Եւ թէ , ինչ որ նկատելի է , շատերն ալ վարձուած կամ սակարկուած , ու մեր համայնքին արուեստագէտները շատ ցանցառ թիւ մը կը կազմեն գծադրութեամբ :

Մեր մէջ՝ այսինքն մեր հայ-շայմ դասակարգին երկսեռ երիտասարդները այսօր դրեթէ մեծամասնաբար շնորհիւ տարիներէ ի վեր կանոնաւորաբար ըրած էրիւններուն , մէկ մէկ արուեստագէտներ դարձած են , ոմանք ջութակի , ուրիշներ դաշնակի , և այլ երաժշտական գործիքներու վրայ , սակայն ցաւալի է ըսել թէ , նոյն այդ ազնիւ անձնաւորութիւնները փոխանակ այդ օրը բեմի վրայ երևնալու , մեզ հետ հաւասար , քառքեղը կամ , լոժերու մէջ կերելին , և ժողովուրդը կը հարկադրուի լսել , իրեն ծանօթ մարդիկը , անոնք՝ զորս , երեկոյներու , պարահանդէսներու և մասնաւոր նուագահանդէսներու մէջ արդէն լրած ու տեսած են , և թէ նորութիւն մը չէ բնաւ իրեն համար ատունց ներկայութիւնը :

Փափաքելի է՝ Ս. Փրկչի Հիւանդանոցին պէս բաղմակարօտ տան մը տարեկան այս հանդէսին՝ որչափ կարելի է հրաւիրել մեր համայնքին կարող արուեստագէտները , ինչպէս իրաւամբ դիտել կուտար Մաւիսի խմբագիրը , իր անցեալ շարթուան թիւին մէջ ու չի խճուել զայն օտար դէմքերով : Ասիկայ պարզ փափաք մընէ , ժողովուրդին կողմէ յայտնուած՝ որուն արձագանգը կըլլանք այսօր :

Բայց խնդրոյն հակառակ կողմն ալ երբ նկատի առնենք , պիտի տեսնենք որ մերիւնները չեն ուզեր մասնակցիլ : Խիպի , և ամօթի պէս տղայական առարկութիւններով միշտ փախուսաւ կուտան իրենց դէմ եղած հրաւերէն : Աս ալ ճշմարիտ է : Մեր մէջ Եւրոպական համարձակութիւն չիկայ երաժշտութեան մասին : Դիտեցէք , ո՛ր և է արուեստագէտի մը երբ հրաւեր կարգաւ սալօնի մը մէջ կտոր մը զարնելու , դաշնակի կամ ուրիշ գործիքի մը վրայ , պիտի տեսնենք թէ ամօթի կարմիրը պիտի պատէ դէմքը ու խիպը պիտի կապկապէ զինքը , հակառակ անոր վարպետութեանը և կարողութեանը : Արդ , տասը քրան հոգիի

ներկայութեանը քաջուող մէկը, ինչպէ՞ս կուզէք որ հարիւրաւոր ունենդիրներու առջև նուագածէ՝ Համարձակութիւնը թէև ամէն բանի մէջ տգեղ, սուկայն նուագի մէջ էն կարեւոր յատկութիւնն է, զոր ամէն արուեստագէտ պէտք է ունենայ. հակառակ պարագային իր դիտյածը կը զգացեալ կը մնայ իր մէջ ու ոչ ոք գաղափար մը կրնայ կազմել իր կարողութեանը նկատմամբ։

Մարտ 26ին տեղի ունենալիք նուագահանդէսին մասնախմբի կարողագոյն անդամները, որոնց ճաշակին վրայ ո՛ր է կասկած չունինք, կը յուսանք թէ նրկատի առնելով այս էական կէտը, ամէն ջանք պիտի ընեն հրաւիրելու մեր համայնքին երկսեռ ամառապետները, որոնց ներկայութիւնը թէ՛ արուեստական տեսակէտով նորութիւն մը և թէ՛ նիւթական նկատումներով եփօնումի մը պիտի ըլլայ։

Պէտք է աւելցնել թէ՛ երբ անոնք յօժարին նուիրել իրենց մասնակցութիւնը այս բարենպատակ հանդէսին, նիւթապէս նպաստելէ շատ ու շատ վեր բարիք մը ըրած պիտի ըլլան, քանի որ նպատակը աղքատին օգնելն է, բարոյապէս ողորմելու մէկ ձեւը։

Ինչպէս ըսինք, յուսալից ենք թէ՛ մեր այս կարեւոր դիտողութիւնը նկատի կառնուի այս անգամ, ու այդ օրը պատիւը կունենանք ծափահարելու մեր հայ-լայֆ ամառապետները բեմի վրայ, որոնց ներկայութիւնը անգամ մը եւս պիտի հաստատէ սա բացարձակ ճշմարտութիւնը թէ, մենք կը սիրենք Հիւանդանոցը և կը փափաքինք օգնել անոր նիւթապէս թէ՛ բարոյապէս։

Իսկ եթէ ներելի ըլլայ մեզ դիտողութիւն մը ընել նաև այդ ցերեկոյթին մուտքի կարգ կանոնին նկատմամբ, պիտի խնդրենք որ աղուամազեան հիւրընկալներու տեղ, հող, նոյն այդ պաշտօնին կոչուին բանիրուն և քիչ թէ շատ լուրջ անձնաւորութիւններ, քանի որ սուրբուելիք հանդէսը սոսկ ընտանեկան հանգումանք մը ունի։ Այս էական կէտին նկատմամբ Մասնախմբին կարող անդամներուն ալ աջակցութիւնը անհրաժեշտ է, որպէս զի դորձը կատարեալ ըլլայ ու անթերի։

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Հ Մ Մ Ե Լ

Վանգ մը ձայնի լրսեցի,
Հրծծիւն մ'աղու սիրակեզ,
Խորհեք յուզող բնարի պէս,
Շեռք մը ձայնի կանացի։

Խորհեք յուզող բնարի պէս
Թրուալ այրել սրբիս ճուր,
Հոն արծաթեղ հրդեհն ուր,
Հիւծող սրտիւն հոգեկեզ։

Հոն արծաթեղ հրդեհն ուր,
Ուր սէր անհուն կ'որոտար...
Զիս բոցեցուց դալկահար
Սարսուռներու զոգը խոր։

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄՊԱՌՔ

ՄԵՐ ՅԱԻԱԿՆՈՏՆԵՐԸ

Անցեալները, խօսակցութեան մը մէջ, կարող փաստաբան մը, խորհրդածութիւն մը կ'ընէր որ, ըստ իմ խոնարհ կարծիքիս, շատ լաւ կը պատկերացնէ մեր caractereը: Կ'ըսէր թէ «Մենք, ընդհանուրին ընդունած կանոնները անտեսելով է որ կը փառաւորուինք»:

Արդարեւ, զոր օրինակ, կրթական կամ եղեղեցական ո եւ է յանձնաժողովի մը կ'անդամակցինք, կը հաւատամ թէ խղճմտօրէն կ'աշխատինք և ջանք չենք խնայել լաւ արդիւնքներ յառաջ բերելու համար. վերջապէս յանձնաժողովին գործաւնութիւնները կաւարտին: Բնականաբար օրէնքը այնպէս կը պահանջէ որ, իբրեւ խօսք հասկցող, բանիւրուն մարդ, հաշիւ տանք պատկանեալ վարչութեան: Բայց որովհետեւ յաւակնոտներ ենք, մէկդի կը թողունք այդ կանոնաւոր ճամբան, մեր նմաններուն, հասարակ մահկանացուներուն ըրածէն տարբեր բան մը ըրած ըլլալու համար: Զէ նէ ո՛ր պիտի ըլլար մեր գերադասութիւնը. ի՞նչ, ըսել է հաւատարմութիւն չունին վրանիս: Դուք ուղածիդ չափ պատուուէ համոզելու համար որ հաշիւ ուղելը հաւատարմութեան պակասութիւն չ'ենթադրիր, թէ ամէն քաղակալիւր ժողովուրդ այս շաւղին կը հետեւի: Զուր ջանք:

Ուրիշ օրինակ: Պատահաբար ընտանիքի մը մէջ օրիորդի մը կը ներկայացուիս: Որչափ շնորհքով, խելացի, հեղաբարոյ և պարզ է կ'ըսես միտքէդ, ուշադիր քննութեամբ մը. խօսակցութիւնն ալ շատ համով է: Վերջապէս կը մտթիս ինքնիրենդ որ ասանկ հաղուադիւտ ձիրքեր ունեցող օրիորդները ամուսնանան, որպէս զի ամէն կերպով կատարեալ ընտանեկան բոյներ կազմելով համայնքիդ բարոյական մակարդակին բարձրացման նպատեն: Ափսոս, խնդիրքդ ընդունուեցաւ Աստուծմէ և յիշեալ օրիորդը հարուստ, շնորհքով անձնաւորութեան մը հետ ամուսնացաւ, հարկաւ կ'սպասես որ տիկինը նորէն նոյն պարզասիրութիւնը, նոյն կենցաղագիտութիւնը պիտի ցուցնէ և օրինակ մը պիտի ըլլայ իր սեռակիցներուն:

Խարուհար, սիրելիս, «autres temps, autres mœurs». տիկինն ալ վարակուեցաւ յաւակնոտութեան ախտէն, անիկա ալ առջի գիտցածդ չէ. քեզ տեսնայ նէ չճանչնար իսկ այլ եւս, շատ շատ սանկ տարտամօրէն մը կը յիշէ քեզի և գլխու ամենաթեթեւ, անզգալի շարժումով մը կը բարեւէ: Քու այն աղուոր յոյսերդ ցնդեցան, դժբաղդաբար:

Ուրիշ օրինակ: Նոյնպէս Ս. Ծնունդի կամ Զատիկի սովորական այցելութեան մը ատեն ջով վաճառականի մը կը ներկայացուիս, հետը կը խօսակցիս: Ի՞նչ լուսաւորեալ մարդ է կ'ըսես մտովի: Իր վաճառատան մէջ աշխատող պաշտօնեաներուն երանի կ'ուտաս: Քանի մ'օր վերջը, փողոցին մէջ կամ շոգենաւը կը հանդպիս: Մարդը վեր ի վերոյ պարզ ակնարկ մը կը նետէ վրտդ և բարեւելու չհաճիր, կը զարմանաս, ինչո՞ւ այս փոփոխութիւնը. ի՞նչ յուսախաբութիւն: Հիմա կը հասկնաս որ ան քու լուսաւորեալ կարծած անձդ պարզապէս սարսափելի յաւակնոտին մէկն է, որ բնականաբար քեզի պէս խեղճ պատանեակի կարեւորութիւն չկրնար տալ:

Ուրիշ օրինակ: Բարեկամ մ'ունիս որ շաբաթաթերթերու կամ օրաթերթերու մէջ յօդուածներ մը կը գրէ. այսինքն պարոնը յօդուածագիր մ'է, (խոնարհութիւն ըրէք) ուրիմն նոյն ինքն կատարելագործութիւնն է, ալ աշխատելու պէտք չունի բնաւ, քանի որ գրելու կարողութիւնը Աստուծային տուրք մըն է, որուն շնորհիւ մարդ կրնայ աւանդ ճիգի հրաշալիքներ, գլուխ գործոցներ արտադրել: Բարեկամաբար կ'զգացընես իրեն թէ ամէնէն նշանաւոր գրագէտները, բանաստեղծները, փիլիսոփայները (իրեն նմանցնելու համար) անգամ չարունակ կը կարգան ու կը կարդան, կ'ուսումնասիրեն, նոր գաղափարներ ամբարելու նպատակաւ: Պարապ բան է եղբայր, մի յոգնիր, քու ըսածներուդ ուշադրութեամբ մտիկ ընել կը ձեւացնէ, սակայն խորհրդածութիւններդ մէկ ականջէն կը մտնեն միւսէն ելլելու համար անմիջապէս: Մինչեւ հոս ձայն չես հաներ սակայն, որովհետեւ վերջապէս անոր գործին, մտածելու կերպին խառնուելու իրաւունք չ'ունիս: Բայց բարեկամիդ յաւակնոտութիւնը հոգ չկենար, շատ աւելի յան-

դուզն է անիկա: «Այս շաբթու այսինչ թերթին մէջ աղուար յօդուած մը գրեցի, կարդացիր» կ'ըսէ: Բարկութիւնդ չափ չ'ունի ալ, «Մարդ Աստուծոյ կ'ըսես — բնականաբար մտքէդ — սպասէ որ առաջ ետ յայտնեմ գաղափարս, ո՛ւր տեսնուած է որ մարդ ինքզինքը crûment գովէ»: Անտարակոյս աս ամէնը կը կլլես, գլուխդ կը շարժես և անդին կը դառնաս, անքաղաքավար պատասխան մը չտալու համար:

Ուրիշ օրինակ մ'ալ: Միւսին տարի մը չիկայ վաճառատան մը մէջ պարզ գրագիր մ'էր. առտուն շատ կանուխ գործին գլուխն էր և իրիկուան ալ շատ ուշ կը վերադառնար, չարաչար կ'աշխատէր վերջապէս: Հիմար, տարբեր բան սակայն, ջորպաճի! Եղաւ, վաճառատան մէջ ընկեր եղաւ: Կը հասկնաք ուրեմն դիւրութեամբ որ, ան՝ ժրջանութիւնը շատոնց մէկդի դրած է. արդէն կը վայլէ մի ետ, patron! է հիմա: Ուսումնասիրութեան արժանի թիփ մըն է, պիտե՛րը վեր վեր, նայուածքը վեհերոտ, դէմքին վրայ հեգնական ժպիտ մը. աչքին ամէն մարդ հիւլէի մը չափ հազլու կ'երեւայ. վայ անոր հրամանին տակ եղողին: Ասիկա parvenuի յաւակնոտութեան ներկայացուցիչն է. ինծի համար ամէնէն զագիրը, ամենէն աղտոտը սա թիփ յաւակնոտն է:

Այս շաբթը դեռ շատ կրնայինք երկարել մեր համայնքին ամէն խաւերը թափանցելով. սակայն կը բաւականանանք այս չափով, նպատակնիս գաղափար մը տալ ըլլալով միայն:

Վերջապէս, բացառութիւնները յարգելով բնականաբար, շատ յանակոտ ենք մենք ընդհանուր առմամբ: Ամէնքս ալ ինքզինքնին մէկ մէկ սքանչելիքի տեղ դրած ենք: Գոնէ այս մասին քիչ մը Եւրոպացիներուն հետեւէինք, որոնց ամէնէն տգեղ բարքերը, սովորութիւնները բառ առ բառ ընդօրինակելէ չ'ենք դադարի: Օրինակի համար անոնց մէջ ընդարձակ, կարեւոր ընկերութեան մը անօրէնը ամենայն քաղաքավարութեամբ գլխարկը կը հանէ 5 զրուշ օրական առնող պարզ գործաւորի մը որ բարեւած է զինքը: Մինչդեռ մեր գլխարկաւոր, նորիւրուկ միւսիւնները, մտածելով անշուշտ որ շարունակ գլխարկ հանելով պիտի մաշեցնէին

զայն կամ ցրտառութիւն պիտի ունենային, անամօթարար գլխու պարզ շարժումով կը բաւականանան: Ասիկա մանաւանդ ջիւղերու կը դպի: Մարդ ինչ որ ըլլայ, պէտք է որ, ըստ կենցաղագիտութեան, իւրաքանչիւրին հարկադրած ձեւակերպութեան մէջ անթերի ըլլայ:

Կը մտածեմ թէ ինչ պիտի ընէինք արդեօք մենք թէ որ այդպիսի բարձր պաշտօններու գլուխ անցնէինք: Կ'ենթադրեմ թէ այն ատեն հարկ պիտի ըլլար որ քովերնիս մօտենալ ուղողները, ըստ Զինական սովորութեան, նախապէս երեսուն կամ քառասուն անգամ երկրպագութիւն ընէին:

Իբրեւ վերջապէս, պիտի խնդրէի ուրեմն մեր դաստիարակներէն որ մեր մատաղ սերունդին՝ ձեռնդէցութեան ոգին ներշնչելով, վանեն ասոնցմէ սա յաւակնոտութեան ծաղրելի ունակութիւնը, որ հակառակ պարագային պիտի արմատանայ անոնց բնութեան մէջ և ապագային պիտի ունենանք դժբաղդաբար այսպէս ամբարտաւան յաւակնոտներ, հպարտ տիկիւններ, մեծահով վաճառականներ և ինքզինքնուն վրայ մեծ համարում ունեցող միւսիւններ:

ՄԻՐԱՍԵԼ՝

ՊԱՅՈՒՆՆԵՐՍ

Տիեզերքի պէս լայնարձակ ու անծայր Սիւրսս խորեք ունի յսուկ յոյգերու: Ուր կը ձնին խօլ բոճանքներ անհամար, Պատրանքներով իրականեւ ցաւ հեռու:

Վայրկեաններու անեացման ցակ յուզիչ կը սլանայ հոգիս աշխարհ մը անյայտ, Եւ փափաքներ երամներով յար սարսիչ Մտայրս մեզ կը թեւածեն կենսախայս:

Մթին ու լուրթ ոլորտին մեջ իմ հոգւոյն Շող մ'են անոնք ասուպներու պէս մոլար, Ուր մարմինք բեկբեկ լուսով մ'երերուն Պահ մը նոյլ ցալով յոյսիս կիսավառ:

Փափաքներու լայն ցաւքին մեզ բերկրալի երազելը՝ հաշուեթեանքս է լրում:

Երջանկութեան ժպիտ մը, ահ, կը փայլի Դեմքիս վրայ, ուր կայ կեանքի գործ բուրում:

Նայուածք մը պաղ իրականքն իստաւունչ Սքափում մը այլ անուշիս սիրալի, Եւ կը ցնդին բաղանգներս անմեղունչ, Էութեանս մեջ թողով քախիծ մը ցանցի:

Այսպէս տեղոս յոյգերու ձեռք դառալիք, Միտքս վայր մ'է պայքարներու յարժամ, Եւ կ'զգամ քե իղձեսս ի՞նչ են միջ: չարիք, Սակայն, աւաղ, հոգեքես են անբաժան:

Գ. Թ. Գ. Գ. Գ. Գ. Գ.

ԶԵՆԻԹ ՈՒ ՆԱՏԻՐ

«ԱՂՋԻԿՆԵՐԸ»

Եթէ մէկ կողմէն, պատանիներուն կը վերադրենք մեր ընտանեկան եսին խիզախ դերը, նոյնքան մընալ աղջիկներուն է որ ձգած ենք բուն իսկ ամենէն նուրբ ու էական մաս մը, զոր կը բերուն նուիրագործել, այն ամեն ձիրքերով օժտուած, որոնցմով պիտի զարգացնեն, պիտի նպաստաւորեն մեր ընտանեկան կեանքին բոլոր նուիրականութիւնը: Եթէ պատանիները, դուրսի, առեւտուրի կեանքին գործօն անհատականութիւնը կը կազմեն և բարոյական պարտք մը կայ իրենց ուսերուն բնացուած, նոյնքան ալ մեր այդ սիրուն, գրաւիչ ու բարեմոյն օժտուածներով պսակուած աղջիկներն են, որոնք կը պարտաւորուին ծաղկեցնել իրենց պատկանած ընտանեկան խմբակներուն անունը ու պատիւը:

Ու ասոր համար է որ մեր բոլոր ուշադրութիւնը իրենց վրայ կեդրոնացնելով կը յարգենք մեր բոլոր կեանքին մէջ այդ նըրբերանդ ծաղիկներուն վառ խմբակները, ամեն մէկ ընտանեկան յարկերուն մարմանդները նկատելով միշտ: Մէկ խօսքով, վաղուան մայրերուն այդ անթուելի լեզէտը, որոնք, ամենէն նուրբ ամենէն հրապուրիչ և ամենէն գրաւիչ տարրը կը կազմեն Յայի սեռին, և այդ գիւթական ոստանին փափուկ հոգիները միացած են միշտ, անյիշատակ օրերէ ի վեր, Ժպտանքու երջանկութեան ու խօսքի տէր մը կռուանն են անլրէպ, որոնց շրջագծին վրայ միացուցած ենք կեանքի մեր բարօրութեան և քաղցրութեան միակ ակնկալութիւնները, անոնց պաշտելի դանցին մէջ կամովին վերագրելով մեր անհաշիւ իղձերը, իրարմէ տարբեր, իրարմէ զղխիչ, Կեանքի հուրիները իրենք, կեանքին բոցերը՝ որոնց շուրջը կը թրթռայ կը թռչտի մարդ էակը:

Վառվռուն ու գունագեղ էջերու մէջ ծիրաներիմուած իրենց դէմքերը վստահօրէն ընդունած ենք թէ, օրէ օր ալ աւելի աչառու պէս պիտի թիւններով պիտի փայլին, իրարմէ հեշտագին բոցի մը բուլբուլուն մէջ

ձգելով իրենց շուրջինները, երբեք սրբագրելի և երբեք ժխտելի վերապահութիւնով մը գրաւուելով հետզհետէ, զիրենք շրջապատող ընտանեկան կամ բարեկամական շրջանակներէն: Տան մը քաղցրութիւնները, ներդաշնակութեան բանալիները, այնքան պատուաբեր, այնքան երջանկաւիթ, միշտ անվթար մնալով, նոյն դիրքին, նոյն կոչումին տակ:

Անփոփոխ յաջորդականութիւնով մը, պիտի մեծնան ու ծաղկին անոնք, վարդուրանութիւններ ցանցնելով չորս դին, լուրջ դեմքեր հանդիսանալով միշտ, որոնց պիտի վստահինք վաղուան մեր մատաղ սերունդին բարոյական և կրթական առաջադրութիւնը, Մայր, արժանի տիտղոսով նուիրագործելէ ետքը զիրենք, իբր լուսապսակը ընդունելով, հետզհետէ կազմուելիք իւրաքանչիւր ամուսնական միութիւններու ատեն:

Որքան քաղցր է, որքան երջանկաբեր է իրենց գոյութիւնը մեր ընտանեկան յարկերուն մէջ, նոյնքան ալ բարձր է իրենց ընկերային դիրքը, իբր հիմ, իբր աղբիւր ամէն մէկ ապագայ ամուսնական բարօրութեան հանդէպ և որոնք անխուսափելիօրէն իրարու պիտի յաջորդեն, իրարու ծնունդ պիտի տան, բնական խիստ բացորոշ իրականութիւնով մը, այսօր, վաղը և յաջորդաբար:

* * *

Որքան որ բարձր դիրք մը և իրական արժանիքներու մէջ կը սիրենք տեսնել աղջիկներուն յոյ լեզէտը, նոյնքան ալ ջախջախիչ դիպուած մը կը տանի մեզ ամփոփուիլ վայրկեան մը դիտակնիս դարձնել տալով պահ մը, միտալին միւս երեսին վրայ ևս, և ո՛ւր ստուերներու աղօտ բեկբեկումներու մէջ կ'երերտկան, կը շարժին, կեղեկջեն, Եւայի թռուներու իրաւցնէ սիրուն ու գրաւիչ մաս մընալ, որոնք հեշտագրգիւ կեանքի մը պարուրանքին մէջ կը տարուբերուին, բոլորովին հեռու նուիրագործուելիք բարի նպատակէ մը: Չկան հոն, կէտ ըլծանքներու կեդրոնացումը, անկեղծ ու հաւատարիմ սրտերու պսակաւորումը և ջերմ գիրկընդխառնումը մը հսկայ պատկերացումը, որոնցմով ոսկեզօծուած բարի առիթներ պիտի սպասէինք տարբեր պարագայի մը մէջ

և ուր՝ մի և նոյն ատեն պիտի ուզէինք գտնել, անբաժանելի կապերու զօդումը և լուսապատկուած բաղձանքներու անհամար առաւելութիւնները: «Անկեղծ համարուած սրտերուն մէջ վտանգ չկայ» ճշմարտութեանը ջերմ դաւանողներ ըլլալով հանդերձ, երբեմն անանկ պարագայներու մէջ կը մնայ մարդ որ, իրարմէ բոլորովին հեռու մտածութիւններ կը սեղմեն զինքը և հաշարումէկ պատուարներ կը ցցուն իր սեւ լեռնաշէններուն առջև, խկովին բնաջինջ ընելով այն բարի թեւադրութիւնները որոնցմով կը տարուէր ատեն մը շատ գեղեցիկ գտնել իր շուրջի բոլոր իրերը, անոնց մէջ ծրարելով իր բոլոր կրթական ու բարոյական ակնկալութիւնները:

Նոյն այս բարոյական հարցին մէջ տարուբեր, աւելի մը չ'լրիպիր ինձմէ, երբ պատահաբար կը բանամ ծրարներու դէպք մը մէջ սպրդած թուղթի կտոր մը, որ առանց թուականի նամակ մընէր պարզապէս և որուն մասին առանց ո'ր և է յառաջաբան մը ընելու, իր նոյնութիւնովը կը զետեղեմ հոսա, ինքնին լուռ պատկերացումը սեպելով Զեմիքի մը հակասող իբր Նատիք մը, ակնարկած մեր օրուան նիւթին հերոսուհիներուն՝ աղջկանց բարոյականին:

«Սիրելի Իրէն»,

«Նախորդ նամակովս իմացուցի արդէն թէ, ժագին հետ բարեկամական յարաբերութիւններս խզելուս պատճառը Ատուրի վերջին մէկ նամակն էր . . . որուն մէջ կ'երգնուէր թէ, ամէն միջոցի պիտի դիմէր ժագին հետ ունենալիք բարեկամական նոր յարաբերութեանցս դէմ պատուար մը քաշելու համար . . . արգելելով զիս նոր մէկ զբօսանքէ մընալ . . . Կը հարցնես թէ ինչպէ՞ս կ'անցընեմ, ինչպէ՞ս կը վատնեմ ժամերս: Գիտես արդէն զբաղումներուս առատութիւնը . . . քիչ մը դաշնակ, քիչ մը ընթերցում և ցերեկուան նախընթրիքէս ետքը նորէն կը թաղուիմ գիրքերուս մէջ և ուրիշ ետքը քիչ մը քնանալով կը կադուրուիմ և երեկոյեան դէմ կ'անցնիմ հայելիիս առջև, քրոնիկ այցելուներուս մօտ, ներկայանալի վիճակի մէջ դնելու համար ինքզինքս . . . Հրապուրիչ եմ, այնպէս չէ՞, վստահ եմ ատոր, քանի որ դուն ալ

արդէն խոստովանած էիր անցեալները: Շիտակը ըսելով, ալ զգուանք կ'զգամ կոր շուրջս դեգերող այդ շիք ձէնթլմէններէն, որոնց մօտ ալ ևս հաճոյք չգալէ դադրած, կ'սկսիմ կոր անիծել բազմա, որ խիստ հարուստ, եկամուտներ ունեցող հօր մը գիրքը չէ՛ նետեր զիս, ո'ւր պիտի կրնայի ապրիլ կեանքը, միշտ բաղձանքներուս համաձայն: Ղրկած գիրքս անշուշտ կարդացիր, ըսէ՛, չ'պիտի՞ փափագէիր այդ կեանքն ունենալ: Իրաւ որ կեանքիս կէսը պիտի տայի անոնց համար, այդ հիանալի արարածներուն հետ չ'փման մէջ դնելու համար անձս . . . ո'ւր ամեն ինչ խտէալի մը ձգտող անուշի մը մէջ կը թաւալի և ո'ւր երեւակայէ անգամ մը անուշիկ Իրէնս, թէ սրբան պիտի վալէինք երկուքս ալ, երբ պիտի վալէինք, պիտի տագնապեցնէինք մեր շուրջիները և ըստուկներու պէս պիտի արհաւիրէինք մեզ դարպասող դուքսերը, պարոնները, մարքիզները (գիրքիս հերոսուհիին պէս) . . . առանց տարիքի խտրութեան և առանց հաշուելու անոնց, մեզի հանդէպ և մեր սրտերուն ձգած անդուռող յարգանաց չափը, մէկէն միւսը անցնելով, մէկէն միւսին յանձնելով ինքզինքնիս, այնքան զգըլխիչ յափշտակութիւններու ցանցին մէջ խեղդելով գիրքնք . . . Սխ, գէթ ինձի կամ նմաններուս համար խտէալ կեանքը չ'պիտի ըլլար այն ատեն և բոլոր հոգիով պիտի չ'պաշտօնէր ան, որուն կարօտը կայրէ ու կը խելայեղէ զիս: Նոր գիրք մը պիտի ղրկեմ քեզի, կարդա զայն, կը հասկընաս, կարդալ կը յանձնարարեմ քեզի, սպասելով որ փոխադարձաբար սիրածներէդ փութաս հասցնել ինձ . . . Պիտի ջախջախեմ անխնայ զիս յարգել յանդգնողները, որովհետեւ ներքին խօս խտէալիս կը տեսնեմ որ ո'ր և է յագուրդ մը պիտի չ'կրնան տալ անոնք . . . որուն իրականացումին մէջ մէկզմէկ ողջագուրելու փափուուն վայրկեանը կը մաղթեմ բոլոր սրտովս մեր երկուքին համար ալ . . .

Մնամ քու կինդ

Ժիւսթին

ՌՕՄԱՆ

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ . . . ՈՐՈՎՅԵՏԵՒ . . .

Այս վերնագիրը Կիւսքավ Նատօնը չէ երբեք, ոչ ալ անոր ոտանաւոր թարգմանութիւնը, այլ պարզապէս երած սրտիս հաւաքն է, զոր պիտի բացատրեմ վարը, թէ ինչո՞ւ չեմ ամուսնացած, թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար:

Ամուսնութիւնը մարդ արարածին էական ու նուիրական պարտականութիւնը ըլլալով հանդերձ, իմ տածած հակառակ կարծիքիս չէ՞ք զարմանար:

Ամուսնութիւնը պարտականութիւն մ'է անլրէպ կատարելի ամէն անոնց, որոնք օրը քաշ մը հացին ճամբան գտած կամ գիտցած են, զոր ի հարկին պէտք է կիսեն իրենց կէսին հետ: Հոս երբ հաց կ'ըսենք պէտք է հասկնալ «ապրելակերպը», օրը քսան և չորս ժամ կուշտ ու կռնակը տաք «պահկակերպը»: Իսկ ան որ կարողութիւն չունի այդ անհրաժեշտ նախնական պիտոյքը հոգալու, ինչպէս Սո ձեր ծառան, ի՞նչ պէտք է ընէ: Իրաւունք չունի՞ միթէ մի անգամ ընդմիջտ հրաժարելու այդ անել խնդրէն, այսպէս ազատելով նաեւ անծանօթ կէս մը որ նշաւակ պիտի ըլլար իր դժբաղդութեանը . . . :

Դրամ չունիմ, ասիկայ ճշմարտութիւն մըն է զոր պէտք է խոստովանիմ, եթէ չի խոստովանիմ իսկ, պարտատէրերս կրնան հաստատել:

Դրամ չունիմ, ինչպէս ըսի. սակայն ունեցածս դրամէ վե՛ր . . . : շատ վեր քալիքալ մըն է օրուան հրապարակին համար . . . ԱՂՈՒՈՐ ԵՄ:

Թէեւ հայրս մեծ ժառանգութիւն մը չէ ձգած իր ետին, ոչ ալ անվճարելի ահագին մուրհակներ bien entendu, սակայն զիս գեղեցկութեան բոլոր հատընտիր բուերով զարդարել է մարդուկը, որպէս զի ապագային օգտուիմ այդ դրամազուլիսէն:

Ու կը մտածեմ, օրուան աղջիկներու միակ ու միմիակ փնտռած առաւելութիւնը եղող գեղեցկութիւնը իւրացուցած և անձնաւորած ըլլալովս հանդերձ, ինչո՞ւ չեմ ամուսնանար, և կամ չեմ ուզեր ամուսնանալ և վերջապէս ինչո՞ւ ԶՊԻՏԻ ԱՍՈՒՍՆԱՆԱՄ:

Այս հարցումիս պատասխանը պիտի տամ իմ ընթերցողներուս, որպէս զի համոզուին ու իրենք ալ հաստատեն գաղափարս:

Այս օր մէկն եմ այն քաջածանօթ պարտականներէն որոնց վայելած յարգանքը ոչ ոքի կ'ըլլուի: Պատիւը . . . :

Դերձա՛լ, կօշկակար, նպարավաճառ, մսավաճառ, բանջարավաճառ, եւայլն, եւայլն, բոլորն ալ սպասաւորներու պէս ինծի կը հետեւին ճամբուս երկայնքը յարգանքը:

Փողոցները չաքարավաճառութեամբ պարպող խեղճ ու կրակ մարդուկին 450 դրուչ պարտք լսած էք:

Ոտքերնուդ լուսթռան փալփեցնող ներկարարին 380 դրուչ պարտք իմացած էք:

Կառապանին 750 դրուչի փոքրիկ (°) գումար մը տալիք ունեցա՞ք էք երբեք . . . :

Եւ տակաւին ինչե՛ր ինչե՛ր՝ ովե՛ր ովե՛ր . . . զորս միտք կարելի չէ բերել մինչեւ որ զիրենք չի տեսնամ ու չը յիշեմ:

Ու ըսել թէ ամուսնութիւնը կեանք է հէ՞ . . . :

Օրուան երիտասարդներու մեծամասնութիւնը ամուսնութիւնը կը նկատէ լոկ դրամազուլիս մը, նեցուկ մը, ապրուստի միջոց մը, և ոչ թէ տուն, տեղ, ընտանիք կազմելու ազնիւ միջոց մը:

Այն երիտասարդը որ լիվիմ լիվիմ աղջիկ փնտռելու կ'ելլայ, հասկցէ՞ք թէ իր պիւտճէն խանգարուած է, ամուսնանալու պէտք ունի, որ թարգմանի դրամի ծարաւէն կը պապակի պոչը շտկելու համար:

Սրդ պահ մը ենթադրենք թէ նոյն բանը ընեմ ազատելու համար իմ ներկայ անբացատրելի վիճակէս և հրապարակ նետուիմ ինչպէս ամառը ջուրին մէջ լոգանքի համար, ես ալ ամուսնանալու տէնջէն, որովհետեւ երկու մխրճումներն ալ միեւնոյն են, մին ջուրի՝ միւսը կրկնապատիկ պարտքի մէջ:

Պահ մը ենթադրենք թէ ինծի պէս գրքպանը ծակ և լոկ արտաքին վաղանցուկ տեսք ունեցող մէկու մը աղջիկ տալու փափաքը տածող և հետն ալ 200 ոսկի ամող հաւաքուլս զոքանչ մը և աքլորամիտ աներ պապա մը ձեռք ձգեցի: Իրականութեան երազով խմորուած խանգարուած երեւակա-

յութիւն մ'է ըսածս, հովկուլ ենթադրու-
թիւն մը :

Թէ ինչի՞ պիտի ծառայէ այդ երանելի
գումարը, կամ լաւ է ըսել, թէ ո՞վեր պիտի
ուրախացնէ, հաշուեմ քիչ վարը :

ԴՐԱՄՕԺՏԻՆ ՀԱՆԳՍՏԱՐԱՆՆԵՐԸ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200 ՈՍԿԻ

Գործի սկսանք supposons, հալա՞ օրհ-
նենքի արարողութենէն առաջ դեռ ուրե՞ն-
կօթը կ'ունակս չանցուցած, աքլորամիտ ա-
նեք պապայիս չորցած մատներովը համրած
վարկենէն :

Վարի սենեակը սպասող ու հոգին բե-	Ոսկի
րանը եկող դերձակին	40
Պարտէզին քանի կանգուն ըլլալը չափ-	20
չըփող կօշկակարին	
Գէթ ամուսնութեան հետեւեալ օրը	
գալու չափ աշխուհախորդ տան տի-	60
րոջս երեք տարեկան	
Բարկութենէն չիպաններ դուրս տուող	18
մաւաճառին	
Գնայ եկուրէն ոտքերը ջուր իջեցնող	16
նպարավաճառին	
Յորեկները չուկան դիմած ատենս	
«Փասուլեայէն ուրիշ բան չի մնաց»	8
ըսող ճաշարանապետին	
Սրտնեղութենէն լալկան շաքարավա-	4 1/2
ճառին	
«Օրպապիկէս կտրած քեզ ապրեցու-	3 1/2
ցած եմ» կրկնող ներկարարին	
Նստած ատենս աղառիկ ըլլալը գիտ-	7 1/2
նալով բարկութիւնը ձիւրէն առնող	
կառապանին	
Հարսնիքին օրը իբր անհրաժեշտ ծախք	5
կնքահայրին ափը դնելիք գումարս	
Հարսնիքին օրը կնկանս նուէրը, ետ-	5
քէն աւանդ ձգելու պայմանաւ	
Տաներէցիս	2
Եկեղեցին եւայլն	10
Մանր մուկն առատաձեռնութիւնք	1 1/2
	200

Խնդրեմ Ազնիւ և առատաձեռն ընթեր-
ցողներս, եթէ կը հաճիք, ՏԱՍՆՈՑ մը հե-
տեւեալ աւտոն կամուրջը անցնելու հա-
մար :

Եւ ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանալ :

ՄԱՌԿՈՒԹ

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՑՍ

ԳՈՐԾԻ ԳԱԽԲ ՆՈՐՈԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կա-
րասիներ կոկեկ ամէն կերպով, առանց
խակնիդ պարպելու

Ա. Ե. Լ.

Ա. ՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛ :

Օրիորդ ես, շիբ և աժան հագուիլ կուզես՝ դիմէ՛ :

Երիտասարդ ես և շիբը կը սիրես՝ դիմէ՛ :

Տարեց ես և ցուրտէն պատապարուիլ կուզես՝ դիմէ՛ :

Տղաքներ ունիս որոնց պիտոյք զանկը կը ճածեցնեն՝ դիմէ՛ :

Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ՛ :

Եկածը Կաղանդ, է նուէրներ գնել կը փափաքես՝ դիմէ՛ . . .

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛ :

Ձեռքդ պարապ ճամբայ քալել չե՞ս սիրեր՝ դիմէ՛ :

Կուզե՞ս տունդ կոկեկ ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛ :

Առաջնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛ :

Կուզես շիբ, ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզես ոտից ցլուխ հագուիլ, շքուիլ,

պնուիլ :

Դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՎՈՐՈՐԿ ԹԻՐ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուածի,
ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի,
ժամացոյցներու, չղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՌՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը չաքաթական վճարմամբ :

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ :

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ գոհարեղէնները երբ
գործածուած բայց անվնաս մնացած ըլլան,
հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախ-
ուած և անվնաս մնացած միմիայն աղաման-
դեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15
զեղչով ետ կ'առնուին :

ՍՏԱՆԲՈՒԹԵՒՆ 24.5.6

18 - 30

ԸՆՏՈՐ ՏՂԱՅ Է...

Պէտք է գիտնալ որ ամուսնական կրնձ-
ռակնճիւ խնդրոյն մէջ մեր բարակութիւնը
70 թիւ քէշիլի մախառան ալ անցաւ, այն-
պէս որ, ի խնդիր ամուսնութեան հրապարակ
ոտք նետող երիտասարդը, մինչև որ իր ջառ-
խեմ քաշուածի պէս անթերի ըլլալուն գի-
տակցութիւնը չունենայ, պէտք է իրար
անոյնի թեւը կին մը անցընելու համար, քա-
նի որ իրեն հասցէին սա հարցումը պիտի
հասնի աշխարհիս չորս հովերէն . . . քնտո՞ր
տղայ է :

Երանի մեր հաւերուն, որոնց համար ամուսնութիւնը չուկայէն չորս կանգուն շէյ-
քան պէգի գնելու պէս բան մընէր, մինչ-
դեռ հիմա, օրուան վառեակները կը փետ-
տուին ու կը փետտուին, նորէն չեն յաջողիր,
այնպէս որ, 1905 Մարտ 6ին ամուսնանալու
գաղափարը յղացող երիտասարդ մը՝ հազիւ
1907ի Դեկտեմբերին վերջերը իրականացած
կրնայ տեսնել իր փափաքը, քանի որ իրեն
աղջիկ տալու շնորհը ընող ծնողք, պար-
տականութիւն մը ունին կատարելիք, նուի-
րական գործ մը՝ որուն էական և անխու-
սափելի կէտը սա յանկերդն է կրկնելի . . .
քնտո՞ր տղայ է :

Իսկ գալով օրիորդներուն, խնդիրը կը
տարբերի : Ոչ ոք կը հարցնէ հարսնուկին
որպիսութիւնը, ու մէկը չի հետաքրքրուիր
հարցնելու . . . քնտո՞ր աղջիկ է, բաւական
է որ 3—400 ոսկի բռնէ ձեռքը, ու քիչ
մընալ քիթը բերանը տեղը ըլլայ, ալ քնտո՞ր
հարցումը պզտոր կըլլայ ու հարկ չի մնար
կրկնելու : Աղջիկը անթիքա է, բաղդ մընէ,
չի գտնուած է, հազարէն մէկ մընէ, հեղ է,
հմուկ է, ուսեալ է, ձեռքէն ամէն բան
կուգայ, լեզուանի է, ու քիչին կը գոհա-
նայ . . . :

Արդ, տեսէք թէ 3—400 ոսկին ի՞նչ բա-
րեմանութիւններով կ'օժտէ խուշիկը, որ
վանդակը մտնելէն վերջը պիտի խօսի, ու
կէսուր օլաճախն ալ մտիկ պիտի ընէ օրն
ի բուն անոր դաշտալիկը . . . :

Ասիկայ ճշմարտութիւն մ'է, և կամ լաւ
է ըսել կանոն մ'է, որ մուտ գտած է մեր
մէջ : չեմ գիտեր ո՞ր թուականէն ի վեր և
որ պարիք ըլլալիք չունի, որչափ ատեն մեր
դրախտայ տէլիսի միւսիւները, ծակաչք
թացիկութիւններ ընեն ամուսնութեան առ-
թիւ, առանց քիչ մը վեր բռնելու իրենց
արու մակարդակը, ու միշտ ճաճա կրնոր
իրենց բերնի ծամոց ընելով յանկերդը, պի-
տի ըսեն .

— Քա քուզում օրդտի, քնտո՞ր տղայ է :

* * *

Վաճառականութեան մէջ տեսակ մը
պաշտօնեայնէր կան, որոց ուսնսկներմանճի
անունը կուտան, այսինքն Եւրոպացի գոր-
ծարանատէրերը երբ ուղեն տղաուկ աղ-
բանք ղրկել ո'ւ է վաճառականի մը հաս-
ցէին, անոր կարողութիւնը և գիրքը ստու-
գելու, վստահութիւն գոյացնելու համար,
այդ կարգի ուսնսկներմանճիներուն կը գի-
մեն, ու անոնք ալ իրենց կարգին լաւ կամ
գէշ տեղեկութիւն կուտան, փոխան քանի
մը Ֆուանք վարձատրութեան : Նոյնն է նաեւ
ամուսնութեան մէջ : Կարգ մը կիներ կան,
որոց զբաղումը անոր ասոր վրայ կարծիք
ծախելն է, և եթէ չի ճանչնան չը գիտնան
իսկ, իրենց եղած յանձնարարութիւնը կը
կատարեն ուրիշներու դիմելով, ու այդ գոր-
ծով, այդ արհեստով կապին :

Թէ ինչպէ՞ս ամուսնացու երիտասարդի
մը վրայօք կարծիքներ կը ժողովուին, վարը
պիտի նկարագրենք :

Խուտցի տուտու, այս արհեստին մէջ
այնքան յաւաջ դացած էր որ ալ իր տունը
բժիշկի գրան պէս գոյուիլ չէր գիտեր, ու
վրան բլաքը կը պակսէր, արհեստաւոր մը
ըլլալը նշանակող : Այն կարդ մը մայրերը
որոնք աղջիկ կարդելու կիւլալին, չունչեր-
նին Խուտցիին մօտը կուսէին հասկնալու
համար թէ, այսինչ երիտասարդը քնտո՞ր
տղայ էր . . . ու այդ կնճիկ տուտուն իր

մտքին ու յիշողութեան հատորը թղթատելով, գիտցածը դուրս կուտար ու անանկ կապրէր :

Անցեալ չաթու օր մը խուտցի տուտու երբ ձեռքի հրահարով կրակը կը շինէր վարի բակը, յանկարծ դուռը կը դարձուի : Գլուխը շալի մէջ պլլած տիկին մը, որուն դէմքը, ցուրտը կամ կապուտ ըրած էր, ներս կը մտնէ պատկառոտ ձեւերով :

— Բարի լուս գայ վրադ մարիկա . . . ածապա եղլը՞ն եկայ . . . :

— Ասծու բարին քուրուկ, ո՞վ կուզէիր քի . . . :

— Ի՞նչ գիտնամ հոս թարիֆ տունին, ֆուռունին քէօշէն, սառը բէրտէլի տունը աս չէ՞ . . . :

— Աղէկ ես, ատ թարիֆ տուողը ո՞վ է նէ, անուն մանուն չի տուա՞ւ . . . մէկը հարցունելու ըլլաննէ բէրտէլին ընէ՞նկը սալըն կուտան . . . :

— Իշտէ՛ սա ուր է տէլիսանլըներուն ըլլը ճըլլը գիտացու է եղէր, խուժի տուտու է, ի՞նչ է անունը . . . :

— Առտուանցով լախը՞սը կուզես կոր, հա՛ . . . ատ ո՞ր բօստալը սալըն տուաւ քի խուժի տուտու է տէյի անունս . . . :

— Վույ վախնամ չիտակ եկայ . . . փառք քեզ Աստուած . . . :

— Վախու պան չիկայ, չիտակ եկար նէ չիբ չիտակ կերթաս . . . ըսելով կրկին կսկսի կրակը հրահրել :

— Ա.ֆ կնես մարիկա ի՞նչ գիտնամ, ես չէի ճանչնար տէ անոր համար ըսի, կտործիկ մը նստինք տէ տէրտիս տէրման մը . . . ոտքդ պագնեմ, սէրսէմ հաւերը տառցայ ալթըն . . . :

— Էօմրիւտ մէջը խուժի տէյի անուն մը լսած էիր . . . աշխարք խուտցի տուտու տէյի մէյմընալ պերնէն կը հանէ կոր . . . :

— Էյ աֆ կընէս, հազարներով անգամ մեղայ . . . հիմաճուկ ըսելիքս զուրցեմ տէ ինծի խեղ մը սովբեցուր . . . :

Տուտուն կրակը կառնէ վերի սենեակը կը տանի, ու գործին գիտակցութիւնը ունեցողի մը յօխորտանքով՝ անկիւնը կանցնի կը նստի :

— Ի՞նչ է, թէ՛ք ըրէ դուրս տուր նայիմ, հարցունելիքդ ո՞ր տղան է նայիմ . . . :

— Բա գուզում տուտուս, Սուրբուհի-ցաս հերու տօլամային համար էղածին տարած օրըս, սօրմա կէչ սօխախին քէօշէն տունի մը օւթա բէնճիրէին խասա բէրտէլին առալընէն տէլիսանլը մը տեսեր է մախսըմըս . . . : Ան օրն ալ հալման տաք էր տէյի հաֆիֆ դարիֆ հազցուցեր էյի տէ, ըստեղծողին մեռնիմ, վուճուտը բէլթէյի պէս տալար տալար կուգար կոր . . . :

— Մասալը ձգէ տէ տղուն անունը տուր, առտուանցով տահա խախվէս չեմ խմեր . . . հայտէ . . . :

— Իշտէ ատ օրը, ատ տեղէն տեսեր է նէ, Աստուծոյ աշկին մեռնիմ աղջկանս քիս վէթը սիրտը ճըլքեր մէջն է դրեր : Էրթէսի օրը մատին լափան փոխելու համար թառան մայաանոս ժողվելիքէն, սանկ դարձայ քի սեւերով կնիկ մը բառմախին առջին կայնէր կիւլէր եիւզ մը հարցուց քի « Ծահանդուռ տուտուն տունը աս է տէյի . . . » :

— Փուրուկ, մէնիւրպէ մտիկ ընելու գըլուխ չունիմ, կեցիր ես ըսեմ տէ լըմընայ : Կնիկը եկաւ, աղջիկդ ուղեց, տուն մտիւտամ ըսիր, տղան օր մը տեսաւ, աղջիկդ ալ տղուն հաւնեցաւ, օր անցաւ, հիմաճուկ հասկնալ կուզես կոր քի տղան ինտո՞ր է տէյի . . . աս չէ՞ որ սահաթ է ըսելիքդ . . . :

— Վույ ապրիս, թէ՛վէքէլլի չէ քի պէրանը վրայ չեկաւ կէնճին քեզ մէթ ընելով, հա մարիկա ատանկ եղաւ . . . : Հէմ կուզեմ կոր հասկնալ քի ընտո՞ր տղայ է տէյի :

— Հա՛ . . . ասը մէսէլէն հոս է, ես քեզի ուղած ճուղապդ կուտամ ամա, դիտեմ ես իմ աշխարթէրիս . . . :

— Բա ատ ալ ըսին ամա, թէլաչէյով մոռցա . . . երկու չէյրէկ մի, տասուերկուք ու կէս դրուչ, ասանկ բան մը . . . :

— Եաղըչ են ըսեր . . . երեք եւսուն փարայ է . . . ատ ո՞ր բօստալը քէսիմ ըրաւ . . . հէ՞ . . . ես անանկ կրկու չորս վեց չէրեկի, կլոխ ֆօթօզ մը կապած տէ տուռնէն դուրս ատըմ մը դրած չունիմ . . . :

— Էյ ի՞նչ էնէ մարիկա խուռս մեղար, տիլէթդ ի՞նչ էնէ կուտամ, իլլէքիմ ինծի խալըրը ճուղապ մը տուր . . . տղան ընտո՞ր է . . . :

— Սօրմա կէչ սօխախին քէօշէյի խասոս բէրտէլի տունի տղան . . . անունը . . . :

— Տարածաւիշ . . . :

— Չեմ ճանչնար կոր ամա . . . զէնա-
հաթը ի՞նչ է եղէր, կռող կարգացող, տէրի
թիւճարի քով պաշ եազըճի, տեսնողները
մէթ կընեն կոր, կըսեն կոր քի ճամէքեանին
առջին պոյին հետ պարապար սուֆուայի մը
վրայ չարչափներու պէս եայլմթըլը տէֆ-
թէրներուն հէօքմը կընէ տէյի . . . :

— Հասկցայ, հիմաճուկ հրամանքէ բէհ
ըլլալով մէճիտիէ մը ձգես պիտոր ճամբուս
մարաֆ տէյի, ճուղապը պերած օրս ալ
երկու ճերմակ, գործերնուդ կայ տէ փեսայ
առնէ՞ք նէ՛ պսակին օրը հարսին քողքը չի
հանած, ոսկի մը կառնեմ . . . ատէթս աս
է . . . :

— Էյ վրաս փարայ չի գայ հիմա . . .
հէմ ալ բէք սուղ . . . :

— Բեզի ո՞վ ըսաւ քի խուլթյին խանութ
է բացէր տէյի . . . բազարըլի պիտի ել-
լանք, հիմա ոտքդ դուրս դնէս նէ առը
խովանի պէս կը լեցուն, կուզեսնէ տուր
կուզես մի տար, իշատ ատանկ թախում մը
մարեր կան քի ինծի՛ հանի զէնահաթիս ան-
կաճ չեն կախեր տէ, աղջիկնին տիրի տիրի
կերեն կը մըկեն . . . իմ գուրցելիքիս հիշ
չիւբէ չըլլար, հէմ չի վերցունէր, տուր
ըսի մի, տալու է, չըլլալիք պանին ալ չէ
կսեմ կը կըյրեմ կը նետեմ . . . :

— Էյ չէնէ տուն երթամ տէ ճարճրկեմ
մէճիտիէդ, ըսելով դուրս կելլայ սենեա-
կէն, մինչ խուլթի տուտուն նոյն օրն իսկ
գործի սկսելուն համար հայելին դէմը
կանցի ու գլխու պոյամա սինօն կապելու
կղբալի, սուրճը խմելէ վերջ .

Խուլթի տուտուն իր արհեստը գործադ-
րելուն մէջ :

Օղը անձրեւոտ ու գետինները ցիխա-
թաթախ: Տուտուն բէշերը սոթթած շուկայի
երկայնքը կը չափչփէ աչքը հոս հոն, որ-
պէս զի ծանօթ մը գտնայ ու տեղեկութիւն
քաղէ, այդ քէօչէյի տունին տղուն նկատ-
մամբ :

Վերջապէս իրեն վաղածանօթ խոտութ-
պանի մը մօտենալով :

— Վայ մարիկ . . . սաղը չնթուկիմ
քիչ մը . . . բարի լուս եալրուս . . . :

— Խուլթի տուտու խեր է իշալլահ . . .
աս առտուանց կանուխ կէնէ ի՞նչ եօխլամա
կայ նայինք . . . :

— Սուս եղիր օրդտի, զէնահաթ է
գտնուէր . . . ի՞նչ պիտի ընես, աս օր ալ
հալ չունիմ ամա . . . :

— Ո՞վ է հարցունելիքդ կէնէ, պէլքի
կը ճանչնամ . . . :

— Տէրի վրայ մեծ գործ ընող թիւճարի
մը կլոխ եազըճին, խոսա բէրտէլի տունին
աղան . . . կը ճանչնամ կոր . . . :

— Աման խուլթի . . . կէնէ սարթմիշ
մընէր, որին տունի բէրտէները մուշանպա
կըլլայ . . . անո՛ւնը ի՞նչ է . . . :

— Սուս եալրում, աս ալ զէնահաթ չէ՞
եմ . . . նէ իսէ, հիմա դուն ատ տէրիճիին
խանութը ցուցուր տէ ես մէկ աչքով չախ-
միշ կընեմ, կը հասկնամ . . . :

— Ծօ՛ . . . հա՛ . . . հասկցայ ով է
նէ՛ . . . բալամուտին թոռը . . . հա՛ . . .
հասկցայ . . . երեք տարի է ֆուտախի պէս
աղջիկ կը փնտռէ կոր ամա չեն իտար կոր . . . :

— Քա ինչո՞ւ . . . ի՞նչ խուտուր ունի
քի . . . :

— Ըռախի սըսխա է եղեր . . . :

— Է վո՛ւյ վայ մեղքիս . . . իրաւցունէ
քանի՞ տարու կայ . . . :

— Էյ քառսունին մօտ է, չիյտեմ ամա . . . :

— Աղջկանը հարը մէխանաճի չէ քի
փեսին փորը լեցունէ քիւբերով . . . ըլլա-
լու պան չէ հէ՛ եալրուս . . . :

— Դուն գիտես ամա . . . :

— Էյ կայնէ մէյ մը երթամ տեսնամ տէ,
աչկովս պէլլէմիշ ընեմ . . . ըսելով կը մեկ-
նի և աշդէն այդ մարդուկը տղուն գործա-
տեղին ցուցուցած ըլլալով, չիտակ շունչը
այդ տեղը կառնէ, ու իրեն յատուկ վար-
պետ ձեւերով խանութէն ներս կը սողոսկի,
ուր բաթուօնը անկիւնը փռուած, վիթոխնին
առջև դրուած մեծադիր սեղանին վրայ
տեսարակ կարճահադէր :

— Բարի լուս գայ վրանիդ . . . :

—

— Վայ մարիկ . . . ծնդուննէր . . .

հիշ առջինը չեմ միացեր . . . :

— Ի՞նչ է ան տուտու, ինչ կուզես . . . :

— Դործդ նայէ ես լրուս բան ուղեկու
չեմ . . . ֆախաթ . . . :

— Մենք հոս զբաղած մարդիկ ենք, ըսելիքդ չուտով յայտնէ . . . :

— Ա՜յ կընես ամա, սորմա կէջ սօխախին քէօչէյի պէրնի խաստ բէրտէլի տունին ճա-հիլը հրամանքդ ես . . . :

— Զբաղած ենք ըսի տուտու . . . վեր-ջին ըսելիքդ առաջ ըսէ . . . :

— Հա՛ ա՛մա ետվրում վերջէն կըլլայ քի դուք գործ կուենաք, աւտուանց եկայ քի ուսումնիդովը հասկնամ տէյի . . . :

— Նաքը խասալը բէրտէ, ի՞նչ կըսես կոր կնիկ, ի՞նչ գործի համար է :

— Խերով էնէ կըլլայ իշալլահ, իմ ծառ-քովս եղածները աս օրուան օրս ծլած ծաղ-կած, ճղած ճղաւորուած են, է՛հ . . . ի՞նչ գիտես . . . :

— Գործի տէր ենք կնիկ . . . ո՛ւրիկէ ուր հանդիպեցար սուտուանցով . . . :

— Բա ետվրում, զահէր հիմաճուկուան մօտան ասանկ է, հէ՛մ կարգուինք տէյի խենթ կեւլաք, հէ՛մ ալ սըրսն կայ նէ քի-թերնիդ խաֆ տաղիէն ճուր կը խմէ, իշտէ ան է քի կլոխդ ոտք ընելու ելեր ես նէ թող աուր քի զէնահաթիս հէօքմէն քանի մը պան հարցունեմ . . . : Հրամանքդ ըռա-խի մէճպո՛ւն ես եղէր . . . :

— Բեզ ո՞վ զրկեց տուտու, կըսէ մար-դուկը, բարկութիւնէն կաս կապուտ կըտ-րած . . . քեզի ո՞վ ըսաւ քի աս մաղազան կարգուեցու տղայ կայ տէյի . . . :

— Տէր ողորմեայ . . . կը ծածկես կոր քի ինքրիկնդ պէճբուսիս տէ թէլլալէնս չիտա՛մ տէյինէ, միւնքինը չիկայ կառնեմ, հերու քէչի պուշուզինց տղան ալ ան ա-պուրը կերաւ ամա՛ . . . ամիս մը ըսիննէ կնիկը պաղնիք երթալու պէս պոխճան շալ-կեց մօրը կողք եկաւ սըղընմիշ եղաւ . . . :

— Պէ՛ կնիկ նասըլ կարգուիլ . . . քեզի ո՞վ ըսաւ քի ես կարգուելու միտք ունիմ եախօտ, աղջիկ կը փնտուեմ կոր տէյի . . . սուտուանցով հէտիյէ՛ եկար . . . :

— Տէր ողորմեայ, տէրի գործ ընողին կլոխ եազըճին, հրամանքդ չե՛ս . . . հիմա ալ ծառքովս դրածիս պէս կտայ, իշտէ խո-շոր ճամին առջին սըլըլու մասայի մը վրայ գիր կը գրէ ըսին . . . :

Նոյն ատեն վաճառականին 10—12 տա-րու աղեկը ներս մտնելով . . . :

— Հայրի՛կ . . . եկանք, մայրիկս ալ կուգայ կոր . . . :

Պատշաճ քօթիւմով մանկամարդ տիկին մը գլխու երեք ոսկինոց գլխարկը ճօճելով ներս կը մտնէ, ու իրենց այս անակնկալ գալուտը վաճառականին խնդուք, իսկ Խութցի տուտուի անակնկալ ապշութիւն մը կը պատճառէ :

— Էյ տուտու ըսէ նայինք աղջիկը քա-նի՛ ոսկի դրախոմա կուտայ կոր . . . :

— Վո՛ւյ վայ մեղքիս . . . կարգած է եղէր . . . : Երկու աշկդ քէօռնայ Խաչա-տուր, քի ինծի օյին խախցուցիր . . . :

— Նշանը երբ պիտի տանինք տուտու . . . չըսե՛ս . . . ծան հանէ . . . :

— Բա ետվրում ի՞նչ գիտնամ, եաղըշ թարիֆ տուին չան զաւակները . . . խերը տեսնաս, մէկ բարձի վրայ ծերանաք, ամա ինծի դարիֆ ըրածնին ըռախի սիւնկէր է ըսին, հրամանքնիդ իսէ . . . :

— Հայտէ պօյըդ տեսնամ . . . անանկ օլուր օլմազ մաղազան մտնալով՝ էլ ալէմին մասխառայ մըլլար, հայտէ նայիմ . . . կըսէ, մինչ Խութցի տուտու ծովէ ելած մուկի պէս սմբած ու գլխիկոր դուրս կեւլայ, ամօթի կարմիրը երեսին ու աչքը կը պտտցնէ տես-նելու գտնելու համար այն վաճառականին գրագիրը, որուն տանը վարագոյրները գի-տեր միայն, առանց անունը գիտնալու :

Սատանան գործ չունի կըսեն, և իրաւ է այն խօսքը : Երբ Խութցի տուտու արհես-տին շոշորդը վրան հոս հոն փողոցները կը դառնար, յանկարծ կանգ կառնէ վաճառա-տան մը առջև, որուն ցուցափեղկին մօտ մազերը իւղոտած չիք միւսիւ մը, գրիչը ականջին լրագիր կը կարդար :

— Վախնամ աս է ըսած տղանին, մէյ մը կլոխ զարնեմ ըսելով ներս կը մտնայ :

— Բարի լուս ետվրուս, սանկ կտորճիկ մը կրնամ նստիլ . . . ոտքերս ճուր իջաւ . . .

— Հրամանքէք տիկին մայր . . . սուրճ կառնէ՞ք . . . :

— Սճապա եաղըշ եկայ, ինծի տէրի վրայ գործ կընէ ըսին, դուք գիտնալս խախուէ կը ծախէք հա՛ . . . :

— Ո՛չ . . . ճիշդ է ըսածնին, մենք հոս կաշիի վաճառականութեամբ կըբաղինք . . . :

— Հրամանքդ ազա՛պ ես ետվրում . . . :

— Ամուրի եմ, այո տիկին մայր . . .
 ձեր հարցումին պատճառ . . . :

— Ձեմ հասկնար կոր քի . . . :

— Ինչո՞ւ հարցուցիք ըսել կուզեմ . . . :

— Հարցունելուս միտք բանին սա է քիմ,
 անցած տարի բախլախոռին օրը, քու տու-
 նիդ խասա բերտէիդ ետեւէն էթինէ տօլղուն
 եօսմա աղջիկ մը տեսէր տէ հաւնեւր էս . . .
 իրա՞ւ է . . . :

— Հասկցայ, Օր. Սրբուհիին համար է
 ձեր ըսածը, այո՛ կը յիշեմ, կը ճանչնամ
 զինքը, ուրե՞մն . . . :

— Իշտէ ատ աղջկանը համար ճուղապ
 էս ուղէր, ես ալ ծանօթութիւն ունենալուս
 մէջ մը քիզ տեսնալ եկա՛յ տէ . . . :

— Ծատ լաւ Տիկին մայր, կարծեմ իմ
 վրաս կարծիք ե գաղափար ունենալու մը-
 տօք այնպէս չէ՞ . . . :

— Գուղում որդտի թէք զուրցէ, տօ-
 խանախը ճուղապ ըրէ, զէրէ առտուանց
 պէրի նէ զիհնս մնաց նէ ալ թախաթս . . . :

Ու հազիւ պիտի սկսէին խօսքի, յան-
 կարծ վաճառատան դուռը բացուելով՝ չիք
 ու գեղեցիկ օրիորդ մը կաքաւի պէս ներս
 կը ցատկէ ե իսկոյն երիտասարդին մօտե-
 նալով . . .

— Պօն ժուռ հոգիս . . . աֆէրիմ . . .
 ասանկ հէ՞ . . . :

— Ներեցէք անուշս, հաւատայ որ գործ
 ունեցայ ու չի կրցի գալ . . . սակա՛յն . . . :

— Կաղաչեմ որ սուտ չի խօսիս, գիտես
 որ մէկ գիշեր մը չի տեսնամ չեմ կրնար ըլ-
 լալ ու կսկսիմ լալ . . . :

— Ա՛խ հոգիս . . . գիտես որ ի՞նչ դժ-
 ուարութիւններու կը մատնուիմ, երբ ձեր
 տանը կը մօտենամ, միշտ ձեր մայրը պա-
 տուհանը կըլլայ . . . :

— Ո՛ւֆ . . . քեզի ըսի որ պարտէզին
 կողմէ ձայն ընես, ես իսկոյն խոհանոցին
 դռնէն կը հասնիմ . . . :

— Ա՛խ թռչնիկս իրա՞ւ . . . :

— Հաւատայ խօսքիս . . . կսպասեմ . . .
 բայց թող տուր որ երթամ, իմա բաթօնդ
 կուգայ կարելի է . . . :

— Ուրեմն այս գիշեր ժամը երեքին . . . :

— Այս գիշեր . . . հոգի՛ս . . . :

— Այս գիշեր . . . :

Ու կը մեկնի :

— Է՛հ, մնաս բարով եավրուս, ինծի ի-
 զին, ալթըլս երթամ . . . :

— Բայց տիկին մայր, դեռ չի տեսնուե-
 ցանք ծանօթ խնդրոյն առթիւ . . . :

— Իմ տեղս հրամանքդ տեսնուեցար . . .
 շնորհակալ եմ եավրուս, հայտէ ես երթամ
 տէ դուն գործիդ նայէ քի գիշերուան երե-
 քին աղջիկը այազին չի մնայ, զէրէ նէվա-
 զիլին սօնը սուլու սաթլըճան է . . . :

Ու կը մեկնի :

— Տահա թող ըսեն քի մեզի պէս մու-
 հապէթ թէլլալիները պէտքութիւն չունին
 տէյի, իշտէ տիրի տիրի աղջիկը պիտի էրէր
 կէնճը, մեղա՛յ . . . աչկովս պոնեցի, ը-
 սելով շունչը տուն կառնէ, ու քիչ վերջը
 Սրբուհիցային մայրը գալով . . .

— Ի՞նչ ըրիր տուտուս, խեր է իշալլահ . . .

— Ումէտգ կտրէ քուրուկ, երթալս պօշը
 չի կնաց ամա, աս գործն ալ ճուրը ինկաւ,
 աս օր մաղազան գացի, ոտքս ուղուղու է
 եղէր, պաշխա աղջկան մը հետ խօսք-կապը
 լմնեցուցին, հէմալ աղջիկը թէզիկ ըլլալուն
 գիտնալս հարմնիքն ալ հէմէն աս գիշեր սա-
 հաթը երեքին մութվախին դռանը տուրսի-
 դին պիտի ըլլայ կատարի . . . :

ԼԻԼԱ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Գոնեա . — Ընթանեան վարժարան. Ձեր
 զրկած 25 ղրուչը Վ. Փափազեանի անուան
 ըլլալուն Հանրագիտակի բաժանորդ գրուած
 կըլլաք, քանի որ ներկայիս այդ թերթը մի-
 այն կը հրատարակէ : Ուստի ձեր ուրիշին
 գրած նամակնիդ կարեւորութիւն չունի մեզ
 համար, մենք թերթերը կը ղրկենք վեց ա-
 միս, անկէ վերջ ձեր ուղած թերթին կըր-
 նաք բաժանորդագրուիլ :

Տրապիզոն . — Վ. Յ. էֆ. հաճեցէք ձեր
 բաժնեգինը նորոգել, որպէս զի թերթերը
 չարունակուին :

Եգիպտոս . — Թաշեան էֆ. նոյնպէս :

Սուտան . — Գազմահան էֆ. նոյնպէս :

Եգիպտոս . — Ն. Գառն Պօղոսեան էֆ.

24 ֆր. հաճեցէք ղրկել :

Տիարպէրի . — Յ. Թ. էֆ. փետր. 1 էն
 կը պարտիք, հաճեցէք ղրկել բաժնեգինը :

Թիմուր-Թաշ . — Խաչիկ Գեորգեան էֆ.
 Յունւար 1 էն կը պարտիք :

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մեծ-ծերունի-պարոնին մէկ նշանին վրայ, սպասաւոր մարդը որ զարմացած էր տեսնելով իր մէկ նմանին այնքան մտերմօրէն իր տիրոջը քով նստած ըլլալը, գլուխը կախ, ոտքերը քրքրելով անհետացաւ առանց բառ մը արտասանելու, տանելով հետը իր ափսէն ուր ուտելիքները կային:

Մ. Սէնթէզ սպասաւորը ակնարկելով ըսաւ:

— Եթէ ձեր Մաօ-Չին ըսած ցեղին մարդիկը ամէնքն ալ ասոր կը նմանին, այն ատեն դուք զանոնք չէք կրնար նոյն աստիճանին վրայ դնել տակից 10,000 տարի առաջուան մարդոց հետ:

— Ամէնքն ալ ասոր կը նմանին առանց փոքր բացառութեան մը:

— Եւ այս պատճառով է որ դուք գաղափար դոյացուցած էիք ձեր նախապատմական դարուն ճերմակ մարդոց վիճակին վրայ: Եթէ այդպէս է կը սխալիք: Եթէ ասոր նման ստորին աստիճանի մարդիկ կային, կային նաեւ ճշմարտապէս բարձր միտքի տէր մարդիկ որոնք արժանի են մարդկութեան յարգանքին:

— Ձեռ կրնար հերքել: Միայն սա կըրնամ հետեւցնել թէ ձեր ժամանակները երբ դուք մարդկութեան բարձր դիրքին վրայ կը գտնուէիք, այս Մաօ-Չինները, թանձրաշաղկները շատ նախնական վիճակի մը մէջ էին այն ատեն: Մնաց որ եթէ քանի մը վայրկեան ուշադրութիւն ընծայէք ինծի, կրնամ ձեզի պատկերացնել պատմական այն շրջանները, էն հեռաւոր ժամանակէն ի վեր, ուր կը հասնի մեր աւանդութիւնը Չուցէ այս պատմութիւնը լռաւորէ մեր վիճաբանութեան խնդիրը: Միւս կողմէն, ես ալ օգտուելով ձեր տեղեկութիւններէն պիտի կրնամ կազմաւորել մեր նախնական պատմութեան մէկ մասը, որ ցարդ անձանթ է: Նախ սա չափը ըսեմ թէ ձեզի աստիճանակից չեմ նկատեր մեր Մաօ-Չիններուն, դուք կենդանի վկան էք թէ ձեր ժամանակները սպիտակամորթները առելի բարձր կարողութիւններ ունին մեր Մաօ-Չինները ասոնք թշուառ կացութեան մը մէջ են այժմ:

— Խիստ մեծ հետաքրքրութեամբ ձեզ մտիկ կ'ընեմ Մեծ-ծերունի-պարոն:

— Սկսիմ: Աւանդութիւնը մեզի կըսէ թէ մեր նախնիքը, ազնիւ ցեղէ Չինացիներ են, կը բնակէին ընդարձակ երկրի մը վրայ որուն Ասիա անունը կուտային: Այս երկիրը, այդ դարերուն, արեւելեան կողմը ունէր մեծատարած ծով մը . . . :

— Ի՞նչ, միջամտեց յանկարծ Մ. Սէնթէզ եռանդաւոր, «այդ դարուն» ըսի՛ք . . . արդեօք հիմա ծով չկա՞յ Ասիոյ եզերքներուն վրայ . . . :

— Ոչ, և երկար ատենէ ի վեր: Այս ծովը մասամբ լեցուած էր բուստերով և ծովաբոյսերով արտակարգ աճումով, որոնցմէ հոտ ցամաք մը կազմուած է հինին լծորդուած:

— Ժամանակաւ գուշակած էի որ այդպէս պիտի ըլլար, աւելցուց Մ. Սէնթէզ, բայց ասոր իրականացումը տեսնելու չափ երկար կեանք չի պիտի ունենայի, կը կարծէի: Այս մասին արտակարգ պատմութիւններ պիտի պատմեմ ձեզի, Մեծ ծերունի պարոն: Բայց չարունակեցէք կ'աղաչեմ:

— Մեր նախնիքները, մեզմ բարբերով և ինքզինքնին ընդհանրապէս երկրագործութեան տուած, իրենց տեղը նեղ գոտի լով սկսան տարածուիլ դրացի երկիրներ ալ, ուր հանդիպեցան Արեւմուտքի ճերմակ մարդուն: Այս վերջինները արիւնային խառնուածքով, պատերազմ և զինեալ յաղթա-

նական միայն կ'երազէին : Արդէն քանիցս անոնք յարձակած էին և յաղթած էին խաղաղասէր Չինացիին որ սակայն անդորր կեանք մը միայն կը փնտռէր : Այս երկու ցեղերուն բնութեան իրարու հակոտնէութիւնը նոր և արիւննուռուշտ կռիւներու տեղի տուաւ որոնք տեւեցին մինչև այն օրը ուր Չինացիք, տակաւ բազմացած և զօրացած, որոշեցին վերջացնել զայն : Անդադար պարտուելէ և յաղթուելէ յոգնած այս համաստեղաբարձները, ինքզինքնին պաշտպանելու համար ստիպուեցան իրենց անհանդարտ դրացիներէն փոխ առնել անոնց կռիւի ձեւերը և ընթացքը և այսպէս օր մը կատաղի պատերազմիկներ դարձան : Կատաղի և անընկճելի, ինչպէս որ պիտի տեսնէք հիմա : Մեր աւանդութիւնը կը յիշատակէ միահամուռ յարձակում մը այն ձերմականերուն վրայ, որոնք կը գտնուէին մեր նախնեաց հողին վրայ, մեծ կոտորած մը որ այնքան ատենէ գուշակուած վրիժառութեան գոհացումն էր : Սպիտակամորթները երբ Չինացիներուն վրայ չյարձակէին սովորութիւն ունին ելեր իրարու դէմ ելլել, ալ դա զգի դէմ, և այսպէս կ'ապրէին մշտնապէս թշնամութեան վրձակի մը մէջ : Կը տեսնէք թէ անոնք բարոյապէս որքան ստորին էին մեր նախահայրերէն և որքան անասնական էին, քանի որ միայն սպաննութեան վրայ կը խորհէին, փոխանակ խաղաղութեան մէջ ապրելու, հեշտ և երջանիկ : Այդ ճերմակաները մեր նախահայրերուն միահամուռ յարձակման դէմ նախ գուցէ մտածեցին համաձայնիլ, միացնել իրենց ուժը և ետ մղել թշնամին : Բայց, ժամանակը անցած էր արդէն . . . : Չինաստան իր կարգին հզօրապէս զինուած էր, միլիոնաւոր պատերազմիկներ, որոշած, վերջացնել իրենց վրդովիչ դրացիները, հայրենի երկիրը ձգեցին, հաստատապէս միտքերնին դրած չղաւնալ հոն մինչև որ կատարելապէս բնաջինջ չընեն ճերմակ ցեղը : Յեղափոխ կռիւ մը եղաւ աս, անդադար, անապոյն պատերազմ մը, ջնջումի պայքար մը : Չինացիք տարածուեցան, հոսանքի մը պէս զոր ոչինչ կրնայ կասեցնել, մինչև ծայրագոյն արեւմուտք, աւերեցին երկիրներ, քանդեցին քաղաքներ, խողխողեցին բնակիչները և

ի վերջոյ, հիանալի և արգաւանդ երկիր մը գտնելով որ իրենց երկրագործական խառնուածքին շատ յարմար էր, կամաց կամաց հոն հաստատուեցան :

— Այս բանը պիտի ըլլար արդէն, միջամտեց Մ. Սէնթեզ ցած ձայնով մը . առանց պատիժի չխաղցուի Չինական կայսրութեան պէս հսկայի մը հետ որ 19րդ դարուն վերջերը ինք միմիայն կէս միլիոն բնակիչ ունէր : Էհ, ըսէք ինծի Մեծ-ձերուսի-պարոն այս կռիւը շատ երկար եղաւ անտարակոյս :

— Ամէն բան ընդհակառակը մեզի ենթադրել կուտայ թէ կարճատե եղաւ, բայց ահաբեկ, շնորհիւ պատերազմիկներուն տէր եղած մարդախողխող միջոցներուն կատարելութեան : Շատ քիչեր եղան որ ճակատագրապէս իրենց մահը գտան :

— Եւ ջնջումը կատարեալ եղաւ այնպէս չէ :

— Կը սխալիք, Շիէն-Շունկ : Այդ դարէն ի վեր Չինացիք արդէն շատ ճարտարարուեստ, շատ խնայող էին, հետեւաբար առանց պատճառի չէին ուղեր ջնջել աշխարհէն գործող ուժեր : Անոնք որ այս պատերազմին կոտորածէն փախան պարզ գերիներ եղան, որոնց մերժուեցաւ միտքի ամէն մըշակութիւն և գործածուեցան ամենակոշտ աշխատութիւններու : Մասնաւոր օրէնքներ դրուեցան յաղթութեան սկիզբները, կանոնի տակ առնելով պարտեալներուն ստորակարգութիւնը : Արգիլուեցաւ անոնց միանալ իրարու, կարգալ գրել սովորիլ, որոշ թիւէ մը աւելի բազմանալ, և երկիրը չձգել որուն պէտք էր կապուած մնալին : Այդ ժամանակներէն ահա կ'սկսի այն խորթացումը որուն մէջ այսօր կը տեսնէք մեր Մաս-Չինները, որոնք երկու հազար տարի առաջուան պարտեալ ճերմակ ցեղին տխուր շարունակութիւնն են : Գալով Մաս-Չին անունին, զոր մենք կը գործածենք մեր նախահայրերու գերիներուն համար, ինծի ըսիք թէ ձեր ժամանակները այդ անունը կը տրուէր անքաղաքակիրթ ցեղի մը որ հին Չինաստանի մէկ կողմը կը բնակէր . . . :

— Այո՛, իրաւ ալ այդպէս էր :

— Բայց չէք խորհիւր որ յաղթողները այդ ածականը տուած են պարտեալներուն, գիտակցութեամբ և փոխաբերաբար, տեսնելով որ պարտեալները մազոտ են իրենց ժամանակուան Մաս-Չիններուն պէս :

(Շարունակելի)

Արտոնաւոր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ

Պապ. Ալի Բասսէտի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌՍՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵՂԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հարնաւ, Թօփուղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուտներու, կանանց թելքաւորներու և
տղայոց շիք և գիմացկուն փոքրիկներու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
լեւմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՋԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐՈՒՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԽԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեՒափու, Ճեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Բ Ա Ր

Ֆոնոկրաֆի Եւ Գրամֆոնոն. Կրամֆոննի
Եւ Երկկողմ Բլազներու, Կեղրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտիի կից, Նալորգ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
շահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այն անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Դաւաններէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բուսական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեղրոնատեղին: